## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771* www.court.am

**N ԴԴ -1 - Ե** ԴԴ 3153-24 Ե-6300

**«06» օգոստոսի 2024թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**
**ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Հովհաննիսյան,***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 71-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 35-րդ կետով՝ ուղարկվում է Դատական դեպարտամենտի կողմից 2023-2024, 2025-2027 թվականների գանձված (գանձվելիք) պետական տուրքի գումարների վերաբերյալ տեղեկանքները և հաշվարկ-հիմնավորումը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 71-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 33-րդ կետով՝ առաջարկվում է հիմք ընդունել Բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի մարտի 21-ի թիվ ԲԴԽ-29-Ո-68 որոշմամբ հաստատված Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների 2025 թվականի բյուջետային հայտը:

Առդիր՝ 4 էջ:

***Հարգանքով՝***

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
**ԿԱՏԱՐՈՂ՝** **ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ**

**Կատ.՝ ֆինանսաբյուջետային վարչություն**
**Հեռ.՝ /+37410/ 511790, 511789**

Ձև N Ե1 (բյուջետային հայտ)

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից

(տեղեկանքը ներկայացնող մարմնի անվանումը)

## 2023-2024թթ գանձված (գանձվելիք) պետական տուրքի գումարների վերաբերյալ

հազար դրամ

| h/h | Պետական տուրքի տեսակը | Գանձապետական հաշվեհամարը | 2023թ. | 2024 թվականի մուտքեր | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փաստացի | փաստացի | | կանխատեսում | | |
| | | | տարեկան | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Տարեկան |
| 1 | Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար | 900005016010<br>900005169264 | 2,443,741.7 | 431,349.2 | 511,394.4 | 479,837.1 | 512,579.0 | 1,935,159.7 |
| 2 | Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննության համար | 900005163671 | 6,000.0 | 180.0 | 290.0 | 510.0 | 3,610.0 | 4,590.0 |

**Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի պարտականությունները կատարող՝**

Պաշտոնատար անձի պաշտոնը

**Արշակ Վարդապետյան**

Անուն, Ազգանուն

Հեռ. /+37410/ 511789, 511820

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից

(տեղեկանքը ներկայացնող մարմնի անվանումը)

2025-2027թթ գանձված (գանձվելիք) պետական տուրքի գումարների վերաբերյալ

հազար դրամ

| հ/հ | Պետական տուրքի տեսակը | Գանձապետական հաշվեհամարը | 2025 թվականի մուտքեր | | | | | 2026թ | 2027թ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կանխատեսում | | |
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Տարեկան | Տարեկան | Տարեկան |
| 1 | Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար | 900005016010<br>900005169264 | 488,100.9 | 541,981.5 | 492,079.0 | 534,119.8 | 2,056,281.2 | 2,539,466.0 | 2,478,653.3 |
| 2 | Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննության համար | 900005163671 | | 2,295.0 | 2,295.0 | | 4,590.0 | 5,520.0 | 5,190.0 |

**Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի պարտականությունները կատարող՝**

Պաշտոնատար անձի պաշտոնը

**Արշակ Վարդապետյան**

Անուն, Ազգանուն

Հեռ. /+37410/ 511789, 511820

## Հիմնավորում

## 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի) նախագծի մաս կազմող պետական տուրքերի կանխատեսումների վերաբերյալ

Բարձրագույն դատական խորհրդի կողմից 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող եկամուտների մաս կազմող պետական տուրքերի կանխատեսումների հաշվարկն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի թիվ 01/8-5/1856-2024 գրությամբ ուղարկված Մեթոդական ցուցումների 2-րդ բաժնով նախատեսված լուծումների շրջանակում՝ ըստ որում դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար տուրքերի հաշվարկները կատարվել են մեկ թվով:

Այսպես.

Մինչ 2025-2027 թվականներին գանձվելիք պետական տուրքերի կանխատեսումների իրականացումը, կանխատեսվել են նաև 2024 թվականին դատական գործերի համար գանձվող պետական տուրքերը, որի համար հիմք է հանդիսացել հաշվետու տարվան նախորդող վերջին չորս տարիների, այն է 2020, 2021, 2022 և 2023 թվականներին գանձված պետական տուրքի փաստացի կատարված ցուցանիշները՝ միջին թվաբանական արտահայտությամբ՝ 10% նվազման կանխատեսումով: 2021 թվականին՝ 2020 թվականի համեմատությամբ, արձանագրվել է տուրքերի փաստացի կատարված ցուցանիշի 22% աճ, 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ՝ 40.8% աճ, 2023 թվականին 2022 թվականի համեմատությամբ՝ 11.5% նվազում: Չնայած՝ վերջին չորս տարիներին փաստացի արձանագրված ցուցանիշների ոչ պարադոքսալ բնույթին, հետագա տարիների համար կանխատեսվող ցուցանիշները սահմանելիս որոշակի նվազման տենդենց է կիրառվում, հաշվի առնելով այն, որ 2023 թվականի դեկտեմբերից գումարի բռնագանձման պահանջի մասին դատական գործերի մինչև 2 մլն. դրամի պարզեցված վարույթի գործերը այլևս չեն քննվում դատական կարգով, այլ քննվում են նոտարների միջոցով: Այդ իսկ պատճառով 2025-2027 թվականների տարեկան ցուցանիշների կանխատեսումն իրականացվել է միևնույն սկզբունքով՝ հիմք է ընդունվել 2020, 2021, 2022, 2023 թվականների փաստացի, ինչպես նաև 2024 թվականի կանխատեսումային ցուցանիշները (միջին թվաբանական արտահայտությամբ)՝ 10% նվազման կանխատեսումով:

Մյուս կողմից, դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որակավորման քննության համար 2025-2027 թվականների կանխատեսման իրականացման հիմքում դրված է յուրաքանչյուր տարվան նախորդող չորս տարիների միջին թվաբանականը: 2024 թվականին

կանխատեսվում է 153 դիմում-հայտի ընդունում, որի համար կգանձվի 4 590 000 ՀՀ դրամ, 2025 թվականին՝ շուրջ 154 դիմում-հայտի ընդունում – 4 620 000 ՀՀ դրամ, 2026 թվականին՝ 184 դիմում-հայտի ընդունում – 5 520 000 ՀՀ դրամ, 2027 թվականին՝ 173 դիմում-հայտի ընդունում – 5 190 000 ՀՀ դրամ պետտուրք:

Ստորև ներկայացվում է իրականացված կանխատեսումների ամփոփ հաշվարկը՝

գումարը՝ Հազ. Դրամ

| Պետական տուրքի տեսակը | 2020 թվական | 2021 թվական | 2022 թվական | 2023 թվական | 2024 թվական | 2025 թվական | 2026 թվական | 2027 թվական |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Փաստացի | | | | | Կանխատեսում | | |
| Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար | 1 607 192,4 | 1 960 887,0 | 2 760 603,4 | 2 443 741,7 | 1 973 795,5 | 2 056 281,2 | 2 539 466,0 | 2 478 653,3 |
| Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որակավորման քննության համար | 4 440,0 | 1 020,0 | 6 930,0 | 6 000,0 | 4 590,0 | 4 620,0 | 5 520,0 | 5 190,0 |